

**VII. ՀՀ ԱՎԾ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ
2009թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՁԱՆԱՌՈՒԹՅԱՆ ,
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐՑՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում 2009թ. ընթացքում փաստաթղթաշրջանառությունը հետևյալ թվային պատկերն է ներկայացնում.

1. Մտից թղթակցություն՝

- ա/ ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներ – 115 միավոր,
- բ/ գրություններ նախարարություններից և այլ գերատեսչություններից (2377 միավոր),
- գ/ ՀՀ ԱՎԾ տարածքային ստորաբաժանումներից (697 միավոր),
- դ/ արտասահմանյան երկրներից (884 միավոր), այդ թվում՝
ԱՊՀ երկրներից (50 միավոր) :

Ընդամենը 4073 միավոր (2008թ.-ի 4376 միավորի դիմաց):

2. Ելից թղթակցություն՝ 11268 միավոր (2008թ.՝ 10876 միավորի դիմաց)

Ընդհանուր փաստաթղթաշրջանառությունը 2009թ. ընթացքում կազմել է 15341 միավոր (2008թ.՝ 15252 միավորի դիմաց):

Ստացված թղթակցությունը 2009թ.-ին 2008թ. համեմատությամբ նվազել է 303 միավորով, իսկ ելից թղթակցությունը ավելացել է 392 միավորով:

ՀՀ ԱՎԾ նախագահի կողմից 2009թ. ընթացքում վերահսկողություն է սահմանվել 150 փաստաթղթի և հանձնարարականի (ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներ և հանձնարարականներ, արձանագրային հանձնարարականներ, այլ նախարարություններից գրություններ և այլն) կատարումն ապահովելու համար, որոնք կատարվել են սահմանված ժամկետներում: